# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 48-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ-08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 12-ի թիվ-08 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

**Այգեկ համայնքի**
**ղեկավարի պաշտոնակատար ______________ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի նոյեմբերի 12-ի N48-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ-08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ-08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
49. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ՝ ԱՌ 01.10.2021 ԹՎԱԿԱՆԸ
50. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 04-009-0165-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 04-009-0147-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ
53. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
54. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 49-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ՝ ԱՌ 01.10.2021 ԹՎԱԿԱՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարպետության օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի հաղորդումը՝ բյուջեի կատարման ընթացքի մասին՝ առ 01.10.2021 թվականը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար ________________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի նոյեմբերի 12-ի N49-Ա որոշման

# ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

2021 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի սեփական եկամուտներն առ 30.09.2021թ.՝ 10139,7 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 70,7%:

*ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* հազար դրամ

| | Եկամուտների տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| **Վարչական բյուջե** | | **53448,5** | **39798,3** | **35735,8** | **89,8** |
| 1 | Գույքային հարկ անշարժ գույքից | 2500,0 | 1892,3 | 1195,5 | 63,2 |
| 2 | Գույքահարկ փոխադրամիջոցից | 10030,0 | 7522,0 | 4299,3 | 57,1 |
| 3 | Տեղական տուրքեր | 280,5 | 280,5 | 334,2 | 119,1 |
| 4 | Վարձակալության վճար | 510,4 | 383,0 | 382,1 | 99,8 |
| 5 | Տեղական վճար՝ ծնող.վճար | 4500,0 | 3000,0 | 2613,4 | 87,1 |
| 6 | Տեղական վճար՝ աղբահանության | 1500,0 | 1125,0 | 953,2 | 84,7 |
| 7 | Այլ եկամուտներ | 0 | 0 | 289,9 | |
| 8 | Դոտացիա | 34128,1 | 25596,1 | 25596,1 | 100,0 |
| **Ֆոնդային բյուջե** | | | | | |
| 1 | Հողի օտարումից եկամուտներ | 8241,5 | 8241,5 | 8241,5 | 100,0 |
| 2 | Տարեսկզբի ազատ մնացորդ | 5060,1 | 5060,1 | 5060,1 | |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | **66750,2** | **53100,0** | **49037,4** | **92,3** |

*ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ* հազար դրամ

| | Ծախսերի տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| **Վարչական բյուջե** | | **53628,5** | **35615,0** | **34397,1** | **96,6** |
| 1 | կառավարման ապարատ | 17345,0 | 12000,0 | 11746,4 | 97,9 |
| 2 | ընդ.բնույթի հանրային ծառայություն | 4750,0 | 3000,0 | 2415,8 | 80,5 |
| 3 | նախադպրոցական կրթություն | 19500,0 | 13500,0 | 13500,0 | 100,0 |
| 4 | մշակույթ, սպորտ, կրոն | 6000,0 | 4900,0 | 4863,0 | 99,2 |
| 5 | աղբահանություն | 1500,0 | 1000,0 | 1000,0 | 100,0 |
| 6 | սոց. ծրագրեր | 500,0 | 500,0 | 265,0 | 53,0 |
| 7 | Գյուղատնտեսություն | 550,0 | 415,0 | 410,9 | 99,0 |
| 8 | Պահուստային ֆոնդ | 2803,5 | | | |
| **Ֆոնդային բյուջե** | | **13301,7** | **13301,7** | **5930,3** | **44,6** |
| 1 | Կապիտալ շինարարություն | 8351,0 | 8351,0 | 3415,4 | 40,9 |
| 2 | Փողոցների լուսավորում | 1000,0 | 1000,0 | 965,4 | 96,5 |
| 3 | Նախագծային ծախսեր | 1520,0 | 1520,0 | 550,0 | 36,2 |
| 4 | Վարչական սարքավորումների ձեռքբերում | 2430,7 | 2430,7 | 99,5 | 41,1 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | **66750,2** | **48916,7** | **40327,4** | **82,4** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 50-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 04-009-0165-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Վիգեն Գառնիկի Մալխասյանի դիմումը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում գտնվող Վիգեն Գառնիկի Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0165-0004 կադաստրային ծածկագրով 1,1932 հեկտար գյուղնշանակության վարելահողից 0,3 հեկտար հողամասի վրա կառուցապատում իրականացնելու նպատակով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

**Այգեկ համայնքի**
**ղեկավարի պաշտոնակատար՝** ____________ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 51-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 04-009-0147-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Սուսաննա Ստեփանի Կիրակոսյանի դիմումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում գտնվող Սուսաննա Ստեփանի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0147-0009 կադաստրային ծածկագրով 0,2 հեկտար գյուղնշանակության վարելահողի վրա կառուցապատում իրականացնելու նպատակով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 52-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, երկարատև, բարեխիղճ աշխատանքի համար՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Խրախուսել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Վարուժան Աբրահամյանին՝ միանվագ դրամական պարգևատրմամբ՝ 300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

**Այգեկ համայնքի**
**ղեկավարի պաշտոնակատար ________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 53-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ-ի <<Էջմիածնի մանկապատանեկան ռադիոդպրոց>> ՍՊԸ-ի 2021 թվականի նոյեմբերի 8-ի N12 գրությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեից 30000 Հայաստանի Հանրապետության դրամ տրամադրել համայնքի բնակիչ Էջմիածնի Մանկապատանեկան Ռադիոդպրոցում սովորող զինակոչիկ Գարիկ Արտավազդի Սարգսյանին՝ ուսման ընթացքում ճանապարհի ծախսերը հոգալու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 54-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին>> N44-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Այգեկ համայնքի
ղեկավարի պաշտոնակատար՝ ____________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի նոյեմբերի 12-ի N54-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Պահուստային ֆոնդի 2803,5 հազար դրամն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝
   1) Կառավարման ապարատի՝ 1.1.1 բաժնի
      ա. 4111 հոդվածին – 1803,5 հազար դրամ,
      բ. 4112 հոդվածին – 400,0 հազար դրամ:
   2) Այլ մշակութային կազմակերպություններ՝8.2.4 բաժնի
      ա. 4237 հոդվածին – 200,0 հազար դրամ,
      բ. 4239 հոդվածին – 400,0 հազար դրամ:
2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների 1.6.1 բաժնի 5112 հոդվածից 15,0 հազար դրամն ուղղել 5134 հոդվածին:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

***Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.***

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի առաջին, երկրորդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.***

Որոշումը մշակվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ղեկավարի կողմից:

***Ակնկալվող արդյունքը.***

1. Բյուջեի ծախսերի մասով՝
   1) Կապված համայնքների խոշորացման պայմանով, համայնքապետարանի աշխատակիցների հետ վերջնահաշվարկի և արձակման նպաստի վճարումների համար աշխատավարձի ֆոնդի ավելացում 1803,5 հազար դրամ գումար:
   2) Համայնքապետարանի աշխատակիցներին դրամական խրախուսման համար լրացուցիչ 400,0 հազար դրամ գումար:
   3) Տարեմուտի միջոցառում կազմակերպելու համար 400,0 հազար դրամ:
   4) Ամանորյա նվերներ համայնքի նախադպրոցական հիմնարկի երեխաներին 200, 0 հազար դրամ:
   5) Հողամասերի չափագրման ծառայություններ մատուցելու ծախսերին լրացուցիչ 15,0 հազար դրամ:

***Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.***

Քանի որ համայնքի բյուջեի ընդունումն ավագանու կողմից նորմատիվ որոշում է, ուստի համայնքի բյուջեի փոփոխության վերաբերյալ ավագանու որոշումը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

*ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ __________ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*